

ՏԵՐՄԵՆ-ԽՄԲԱԳԻՐ


Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԼԻՆԻՒՄ ԵՎ ԳՐԱԳՐՈՒՄ
ՊԵՏԵՐ ԵՎ ՊԱՎԵԼ ԵՎ
ԽՆԴՐԱՅԻՆ ԱՆՆԱԿՆԵՐԻ ԸՄԿՐՈՒՄ
ԳՆԻՒՄ (ՀԱՅ ԳՐԱԳՐԻՒՄ)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱՐՁԱԳՐՈՒՄ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒԻՄՍՈՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան, ողջ դահլիճ. 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵՐ

Տարեկան Ֆրանկ 20

Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԿ Է

ԵՒ ԲՂՔԱՏԱՐԻ ՆԱԽԳԸ

Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղում
գրութիւնք եւ չեն տրուիր:

ՔԱԼԷ՛, ՔԱԼԷ՛

Ստորակ ազգերու համար ապագան այնչափ մթին կը թուի ըլլալ որչափ անոնց ազատութեան սեւեռուն գաղափարի անբռնաբարելիութեան իրաւունքը բռնապետներու համար անբռնաբարելի. մինչդեռ անպիճելի կերպով առաւել լուսաւոր, առաւել պայծառ պէտք էր ըլլալ ապագայ ազատութեան ըմբռնումը ստորակ ազգերու մօտ, իբր անխուսափելի ճակատագրային կեանք: Ստորակ մը համար իր կորուսած ազատութիւնը ձեռք ձգելու գիտակից անդիմադրելի ձգտումէն աւելի կա՛յ միթէ մեծ ու զօրաւոր ապացոյց, քանի որ իր ազատութեան բռնաբարումի գիտակցութիւնը առաջին օրերէն կը ծննդնէ իր մէջ կորսուած ազատութեան ցանկալիութիւնը. անցեալ եւ ներկայ կեանքի չըջանալի համեմատական բաղդատութիւն մը միայն բաւական պիտի ըլլայ փնտռել եւ սիրելի ընծայել սալու գերիին, ինչ որ կորսնցուցած է իր ազատական կեանքի բեղուն օրերէն: Ուրեմն անհերքելի եւ չօշափելի ճշմարտութիւն մ'է գերիին համար իբր ապագայ կեանք նշանակել ազատութեան յաղթանակը, եւ, ընդհակառակը, բռնապետին համար ալ գծել յետագարձ քայլի մը անհրաժեշտութիւնը: Ստորակութիւն եւ բռնապետութիւն ազգերու կեանքին երկու ծայրայեղութիւններն են, երկու բաղդատական եզրերը, որոնց իբր միջին ճանապարհ, կարելի է ըսել, կը մնայ ազատութիւնը: Կանխապատմական դարերէն սկսեալ այդ երկու միմեանց հակոտնեայ հանգրուաններէն է ահա, որ բոլոր մեծ ու փոքր ազգերը ճանապարհ ընկած են հասնելու համար դէպի գաղափարական կեանքի ազատութիւնը, անցնելով պատմական չըջաններէ, կամ, աւելի ճիշտ կ'ըլլայ ըսել, ազգային անբեւեակայելի ձեւափոխութիւններէ (metamorphose):

Գերութենէ դէպի ազատութեան հանգրուանը սակայն կամուրջ մ'է ձգուած, որ կը կոչուի Բռնապետութիւն, որու ժամանակաւոր գոյութեան երեւոյթը ընտանիք էր խաւարակուռ գարբու համար միայն եւ սակայն անոր ջնջումը անխուսափելի պահանջ մ'է ազգերու լուսաւոր օրերուն մէջ, քանի որ ընկերարանական կեանքի վեր-

լուծութեան կշռուած օրէնքները բռնապետին եւ ստրկին համահաւասար գոյութիւններ կը նկատեն, այս ձեւի գաւառութեան մը մէջ թէ, Բռնապետը կորոպսած է ա՛յն, ինչ որ ստրկը չէ կարողացած պահպանել. եւ, հետեւաբար, մին պարտաւոր է ի հարկին յետո գարձնել ա՛յն, ինչ որ իբր չէր, եւ միւսը իրաւունք ունի պահանջել, ինչ որ իրն էր երբեմն: Ահա այս տեսակ բանաձեւի մը վրայ կ'ընթան տեղի կ'ունենան ազգերու այն զօրեղ շփումներն, որ կը կոչուին պատերազմ:

Ուրեմն, բոլոր ազգերու համար անխրտիւր արիւնի ճամբան է գծուած իբր յատակագիծ, որը բռնապետութեան ջրնջմամբ միայն կարելի կ'ընէ ստրկութենէ ազատութեան հասնելուն:

Հա՛յ ազգ, ազգերու պատմական գոյութեան մէջ դու միակը չե՛ս ուրեմն, որ ստրկութենէ ազատութեան երթալու համար ոտքի ելած ես այսօր, անցնելով արդէն այն երկար ճամբան, որ ազատութեան հանգրուանը այնչափ կրճատած, այնչափ մօտիկացած է քեզ:

Սակայն դու յոգնած՝ կը թուիս. այդ առապար փշոտ ուղիին մէջ ոտքերդ վերաւորուած կ'ուզեն կանգ առնել. չուկէտէդ այնչափ հեռացած ես արդէն, մինչդեռ նպատակակէտիդ հասնիլ շատ մօտիկ ըլլալ կը թուի:

«Քալէ՛, քալէ՛» ուրեմն: Անյողդողդու համբերատար ոգու՛մ քալէ՛. քալէ՛ առանց յետսահայեաց ակնարկի, մի՛ խռովիր երբ կը մտաբերես թէ արեան ճահիճներուն մէջ կըբայրնեցող չեղձակոյտերը կը քնանան. քալէ՛ աննուաճելի կամքի ոյժով, քալէ՛ արիւնէ եւ կրակէ ընդելուզուած, սուկորէ եւ գանկերէ դրուագուած այն տխուր ճամբուդ վրայ, որ դու ընդգրկեցիր ազգային կեանքիդ գիտակից համոզմամբ աւանդական մեռելութիւնդ ցնցելով. քալէ՛ չարչարանքիդ ծանր խաչը կռնակդ զարկած. Գողգոթագ մօտի՛կ է . . . հո՛ն հասիր անոր գագաթին փոփոցներու համար ազատութեանդ արիւնալի գրօշակը, ու անոր տա՛կ ընկիր քալի մահով, հերոսի՛ մահով. ի նկատի ունեցիր թէ ապագայ զաւակներուդ ազատութեան գինը քու արիւնդ է. ու մի՛ կրկնեք երբէք նախահայրերուդ երկնած այն բանաձեւը թէ «իւնմն վերջը քրիկեղեղ քող յիւնի»... Ա՛յն ստրկու-

թեան հակամէտ ազգերու ազօթքն է միայն: Եղի՛ր գոնէ այնչափ բարի, որ գէթ զաւակներդ վայելն հայրենիքիդ ծոցը քու ձեռքով նետուած սերմերէն աճած ազատութեան զեղաբոյր ծայրիկը. ու դարեկին թո՛ղ, որ երախտապարտ ոչիւր մը քու զաւակներդ երկիւղածութեամբ դնեն օր մը վրայ, երբ ազատասիրութեան մարմարիդ շուրջը բոլորին ու աւետեն թէ, ազա՛ա է հայրենիքդ:

Հա՛յ ազգ, հայրենիքդ արիւնի ծով մ'է, հրդեհի աւերակոյտ մ'է. սակայն այն կը վերականգնի երբ դու գործունէութեամբ առողջ ես. քու սէզ ու հպարտ լեռներուդ կողքին թառած, գեղեցկաբոյր անտառներուդ ու բերեղ ջրերուդ ծոցիկը բունած քու գիւղ ու քաղաքներդ թափուր են այս պահուս եւ ուր գուցէ այսօր գիւղական ծիծաղով Իսլամի որդիներուն խօշական բանակները կը շահատակեն. սակայն սփոփուէ՛. անխորտակելի կամքին առջեւ կը փշուրի կոպիտ ոյժը, բռնութիւնը կ'ընկնի՛, ու չգթան կը փշրի՛: Մթին ձորերուն մէջ անթաղ մնացած քու քրոջ ու եղբորդ տարածուած դիակներուն վրայէն, գիտե՛մ, դու չես անցնիր անտարբեր. սովի, արիւն քրտինքի ազաղակները, սրբերուդ, այրիներուդ ու ծերերուդ աղեխարշ կականը, գիտե՛մ, քեզ ջրի ձայն ըլլալ չեն թուիր. ներքին ու արտաքին թշնամիներուդ դաւադիր ոգին, գիտե՛մ, այլ եւս քեզ չեն պահեր գաղթավայրերուդ մահաբեր հեշտանքին մէջ ընդ երկար մխրճուած, ու ազգային կեանքէն չէզոքութեամբ ծայրատուած անհատականութիւնդ, գիտե՛մ, կը ցնցէ քու ազգային ետք ու դու երանի կուտաս քեզ, որ ազգիդ ստրկութեան վայրկեաններուն աշխարհ եկած ես եւ կրնաս ծառայել անոր:

Քալէ՛, քալէ՛ ուրեմն, երբ լսես համագային արդար վրէժխնդրութեան թրմբուկին կոչը. արիւնով ընդելուզուած մայր հայրենիքիդ արիւնէ արշայոյսներուն մէջ աչքերը բացած քեզ կ'սպասէ մերկանը հետ քու սիրասուն մանուկդ, որու երթամած մտազաչ անդամները խարոյկներու վրայ խարկուած քու ոչնչակէզ եղբորդ հրաբորքը չիկացած հնոցներէն տաքցան եւ գողահար սարուացին միանգամայն երբ թրշնամու անխնայ սուրը իր մօրը չի խնայած անմեղ մանկանդ օրօրոցին վրա՛յ ալ կախ-

ուեցաւ . . . ու դու բացակայ էիր . . .
 «Բալէ», քալէ՛ ուրեմն. դեռ ժամանակը ուշ չէ՛. վրէժը սուրի պէս սրտիդ մէջ պառկեցուցա՛՛ք քալէ . քալէ՛ քէնն ու ատելութիւնը ուռմբի պէս սրտիդ յատակը թաղած. և երբ ընկնիս վերցուցած գրօշիգ ներքեւը՝ այն ատեն հաւատա՛ միայն թէ հայրենիքիդ ազատութեան հրեշտակը դուն էիր»
 ԱՐՄԷՆ

ՔՐՈՆԻԿ

ԱՂԵՔԱՆՈՒՆԵՐԻՆՑ ԶԱՄԱՆԱՐԱԿԸ

Անա երեք ամիս է որ Աղեքսանդրացիք մեծ պուզման և տագնապի մատնուած են. վասն զի ժամանակաբար, այդ անախորժ ինքնակոչ հիւրը, իրենց այցելութեան եկած է: Սակայն այդ յանգուզն թշնամին՝ որ Աղեքսանդրացիներուն սիրտը սարսափով և ոմանց սլ քսակը Սրբէրկնով լեցունելու պատճառ եղաւ, այժմ նահանջի փողիքը զարնելով հոնկից նեղանալ կը թուի, եթէ երբէք եկած էր:

Առաջին անգամ՝ այդ անարկու թշնամիին ներկայութեանը մասին կասկածներ երևան գալուն, էսկիւլապի բազարի աշակերտները խիզոն ի ժողով գումարեցան. Ակնոցը քիթերնին երկար բարակ խորրդակցեցան, քննեցին, զննեցին և ի լուր աշխարհի յայտարարեցին թէ սոսկալի թըշնամին իրենց քաղաքին դուռը ափ առած է և թէ քաղաքացիք վտանգի մէջ են: Անա՛ սաստիկ իրարանցում գործը, առնը տեղը թողով փախչող փախչողի . . .

Իսկոյն ամէն կողմ հրահանգներ արուեցան, պաշտպանութեան ամէն միջոցներ ձեռք առնուեցան: Աշխարհը հսկողութիւն ի գործ կը դրուէր ներգամիտ թշնամիին յանկարծակիի չ'դալու համար: Մէկ խօսքով ճարտար tactique մը յօրինուեցաւ: Սակայն այս ամէնը ի դարձ քնելու և մահ ու սարսափ սիրտը լէզէնը վանելու, իսպառ սպառ ջնջելու համար՝ թանկագին օժանդակի մը անհրաժեշտ պէտքը կար: Ուստի քաղաքացւոյ կենացը պահպանման այդ անձուէր պաշտօնեաներուն տրամադրութեանը տակ դրուեցան անմիջապէս Ս. Գէորգի գնդէն 23—30,000 նիզակաւոր ձիաւորներ . . .

Այլպիսի այդ խորխոր և քաջամարտիկ այրուծին իւր դեղնագոյն դրօշը պարզած սկսաւ դործել: Քաղաքին այն կողմը որուն սիրելու յաջողած էր թշնամին, իսկոյն պաշարման տակ առնուեցաւ, և անա՛ ճակատամարտը սկսաւ ամեն նայն կատաղութեամբ. պայքարը գիւցազնական էր . . .

Հա՛րկ է ըսել թէ թշնամիին դէմ ո՛չ Մաքսիմի թնթանօթ գործածուեցաւ և ո՛չ ալ Տըմարովի գնդակներ — Լա Հէյի Համաժողովին մէկ որոշումը առաջին ու վերջին անգամ ըլլալով յարգուեցաւ այս պարագային մէջ. — այլ գիտութեան վերջին սիւքեմով ըրած գիւտերովը պատերազմեցան. սաիս Ֆեհիբ, իբօլ սիւպիլիս forogիմ և վառօղի տեղ առատ ծծումբ ու կէր . . .

Այդ ճակատամարտներուն մէջ մեծնոցներուն և վիրաւորներուն ցանկը ամէն օր կը հրապարակուէր, ուր առջի օրերը 1 կամ 2 հատ, իսկ վերջերը գէրօ նշանակուած էր ընդհանրապէս:

Ընդհակառակը ձիաւորներէն զո՛հ գացողներուն թիւը խիստ շատ էր. անոնցմէ հազարաւորներ մեծաւորնոց գլտորեցան ինկան խոր փոսերը . . . քրակներուն: Էսկիւլապի պաշտօնեաները յամառութեամբ պայքարը առաջ կը մղէին՝ անչուշա վտանգ ըլլալով թէ ևսուէն նորանոր օգնութիւն պիտի հասնէր:

Միայն էր սակայն գիտնալ թէ, այս աշխարհաւէր ասպատակ թշնամին ի՛նչպէս Հնդկաստանէն մինչև Աղեքսանդրիա եկած հասած էր անձայն անշուկ՝ առանց իր ճամբուն վրայ երկրակալութիւններ և աւերումներ ընելու: Գարձեալ ժողով, դարձեալ խորհուրդ, և անա՛՛ դադանիքը գտնուած էր . . . Այն տգեղ գձուձ կենդանին՝ որ ամէն ծակօժուկ կը մտնէ կ'եքնէ անարգել, որ

գրագէտին ձեռագիրը և նպարավաճառին պանիրը կը կրծէ կ'ուտէ անխնայ և որ նազելաբայլ արիւնանց և օրհորհրներուն բաւալքի սենեակը կը մտնէ անպակառ ու մինչև իսկ անոնց անուշաբոյր օճառին իւր սլիզը չլիթները հպել կը յանգրգնի. այդ թշուառական կենդանին, կ'ըսեմ, միջնորդ և առաջնորդ եղած էր արշաւող բանակին. ուրեմն թշնամին ներքէն էր:

Ուստի այդ անգամներուն մահուան վճիռը արուեցաւ իսկոյն ժողովին կողմէն. մա՛հ գաւաճաններուն, զոռացին ամէն կողմէն: Արդէն քաղաքին և շրջակայ գիւղերուն պանդոկապեաները յուսահատ կատաղութեամբ լցուած՝ բարկութիւննին թափելու տեղ կը փնտռէին: Խեղճ մարդիկը տարւոյն այս եղանակին՝ իրենց սովորական հիւրերէն զրկուած էին, և բնակիչներէ թափուր մնացած սենեակներուն մէջ շարճճի մուկերը զուարթ ճիւղերով վալս կը խաղային՝ կարծես իրենց պատճառած չարիքին վրայ ուրախանալով: Հա՛պա նպարավաճառ Եանիին և հացագործ Սաւրալապօղին բարկութեանը չար ու սահման չի կար: Ի՞նչ, այդ կեղտոտ կենդանիներուն երեսէն կրած մեամին քի՞չ էր ու հիմայ ալ ոխերիմ թըշնամիին գործիք եղեր էին զիրենք փճացնելու: Պէտք էր ուրեմն շարաշար կերպով պատճել այդ վատերը: Սոսկալի կոտորած մը սկսաւ. խեղճ մուկերը ամէն կողմէ հարուած կ'ընդունէին: Մէկ խօսքով, ա՛յնքան սաստիկ ջարդ, ճապարկը արեան՝ որ կատուներն անգամ ի դուր շարժեցան . . .

Բայց այժմ որ առաջին յուզումն և սարսափը անցած է, բոլոր քաղաքացիք պաղարիւնութեամբ կ'սկսին մտածել, չ'թէ զո՛հ գացած մուկերուն — ո՛հ ո՛չ, այլ այն նիւթական ծանր վընտնեբուն վրայ, զորս թէ՛ իրենք և թէ՛ միւս երկրացիք կրեցին առեւտուրի գաղաթէն: Իրօք այդպիսի թշնամի մը եկա՞ծ էր իրենց մօտ, կարծուածիին պէս վտանգ կա՞ր: Հը՛մ . . . այս գործին մէջ բան մը ըլլալու էր, և մտքերու մէջ սկսան տարակոյտներ ծագել: Այժմ արտունջիբ, բեզորի ձայներ կը բարձրանան ամէն կողմէն և կը պահանջեն որ վերջ տրուի իրաց վիճակին: Սակայն գործաւ ձեռնարկ մարմնը տակաւին կարծիք փոխած չ'երեւիր: Ի՛նչ որ ալ ըլլայ իրենց կարծիքը, առջի տպաւորութիւնը և կարեւորութիւնը կորուսած է: Եթէ ոչ անտեղի ու անհիմն, գէթ չափազանցեալ կ'երեւի վտանգն ու վախը: Արդարեւ այս տարերուն կրնան տարափոխիկ հիւանդութիւններ ծագել և սովորականն աւելի մի քանի մահեր պատահել երեք հարիւր հազար բնակիչ ունեցող ա՛յնպիսի քաղաքի մը մէջ, որուն բնակչաց մեծագոյն մասը Ֆեյլաններ են, որոնք աղտոտութեան մէջմէկ նմոյշներ և միքրոպներու շարժուն ճեքօներ են:

Մաղթենք որ քիչ օրէն քաղաքը զարձեալ իւր սովորական անդորր և գործունեայ վիճակը ստանայ ու առեւտրական տագնապին վերջ տրուի յօգուտ երկրին:

Օ. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուր կը արուի թէ, Երուսաղէմ Գեթսեմանիի մէջ, հայ և իսպաի եկեղեցական պաշտօնեաներու միջև կռիւ մը տեղի ունեցած է և իսպաիներն, եթէ իրաւ է, ծեծ ու տելով վռնուտեր են:

Անտեղի չըլլար ենթագրել, որ մի օր ալ թերեւս կռիւ ծագի Աղեքսանդրիոյ և Գահիրէի Ս. տեղեաց պատկանող հին հաշիւներուն համար, այն ատեն անհաւանական չ'թուի թէ՛ այս խնդրոյն մէջ ալ ծեծը ուտելով փախչողներ պիտի ըլլան խրպախներուն պէս:

Հանդուցեալ Ժօրժ Ավերօֆի քեռորդի Ժ. Ավերօֆ, յանուն Ավերօֆեան գերդաստանին, մասնաւոր նամակաւ շնորհակալութիւն յայտնած է խմբագրութեանս և իւր

աշխատակցաց, հելլէն մեծ բարերարին մահուան առթիւ ի դիմաց եգիպտոսայ գաղթականութեան յայտնուած յաւակցական զգայմանց համար:

Ամսոյս 11ի հինգշաբթի օրն, հայ ազգի բազմամեայ վաստակաւոր ուսուցիչներէն Տիար Մ. Առնապուտեան մեռած է Այե.ք. սանդրիոյ մէջ: Այս առթիւ խմբագրութեանս հասած է նամակ մը, որ առաջիկայ թվով պիտի հրատարակենք՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ:

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կը լսենք թէ անցեալ օր Տիար Մեսրոպ Աղամանի բնակարանին մէջ ի Թէվֆիգիէ, տեղի ունեցած է մեր համակրելի երիտասարդ բարեկամներէն Տիար Տիգրան Աւանեսանի նշանախօսութիւնը, ընդ Օր. Զարուհի Սիմոնեանի, ի ներկայութեան երկու կողմանց ազգականաց և բարեկամաց:

Երկու խօսեցիկց համար երջանիկ միութիւն կը մագթենք:

ԱԶԳ

Ազգաստաննամ լոնկերութեանս Ընդհ. Ժողովը իւր տարեկան նիստը պիտի գումարէ յառաջիկայ կիրակէ 20 օգոստոս ժամը 2 1)2ին աղլկանց վարժարանի սրահին մէջ (Եկեղեցւոյ շրջափակը), և պիտի զբաղի հետեւեալ օրակարգով:

1. Քննութիւն և վաւերացումն տարեկան հաշուեցուցակի.
2. Ընտրութիւն Գործադիր Ժողովոյ դիւանի.
3. Ընտրութիւն պակասաւալ հիմնադիր անդամոց.

Ուստի կը խնդրուի՝ ամեն բաժանորդը կըր ընկերներէն, որ բարի հաճին ներկայ գտնուիլ և կատարել իրենց ազգասիրական պարտաւորութիւնը:

Ի դիմաց Ընդհ. Ժողովոյ Ազգաստաննամ Ընդհ. Գահիրէի Հայոց

Ասեմադպիր Ասեմապետ
 Գ. Պ. ՍԱՐԲԱՅԵԱՆ Ս. ՖէլէյեԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զարն ու Տեյխասէ. — Թայլոց իւր վերջնութեւր թիւերէն միոյն մէջ կրկին հրատարակելով Գորէնհակէն Տէյլի նիւզի հազրդուած լուրը Զարի հրատարակման առթիւ, կը յայտնէ այն գաղափարը թէ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տէլքասէի Ս. Բեթերպուրի այցելութիւնը կապակցութիւն ունի վերոյիշեալ խնդրոյն հետ: Թայլոցի Բարիզեան թղթակցին ըսածներուն նայելով, Տէլքասէի նպատակն էր Զարը համոզել, որ եւս կենայ իւր գահաւիճ գողափարէն:

Միևնոյն թղթակցը հետեւեալ պատճառներուն կը վերագրէ անոր հրատարակման Ս. Զարին ի նպատակայց կրկնած գումարներն որոշեալ տեղը չէ հասած:

Բ. Յուստիսար եղած է Լահէ գումարուած վեհաժողովի գործունէութեան արդիւնքէն:

Գ. Միայն երեք աղջիկ ունի և ոչ մանչ զաւակ:

Դ. Թէ՛ Զարը կը յիշէ ուսական աւանդութիւն մը, որոյ համեմատ առանց սուրջ զաւակի Զարին պէտք է յաջորդէ

Միքայէլ Չար մը, որոյ վիճակուած պիտի ըլլայ Կ. Պոլսոյ գրաւումը:

—Սուրբաբնիկ զեմ դարաւորութիւն մը.— Պէւլիսի Լօսարաններէն թերթը կը հրատարակէ թէ Պոլսոյ մէջ քանի մը շաբաթներ առաջ երբեք Գէօզի մէջ գաւազնուած թիւն մը երեւան ելած է Սուլթանի կենաց գէմը և հաստատուած է, որ այդ գաւազնուած թիւնը եղած է ժէնէրայի մը կողմէ: Սա իւր մի քանի պաշտօնակիցներով ձերբակալուած և անկէ ի վեր անյայտացած է:

—Ս. Բէթէրպուրիէն Տէյրի Թոյնկրուճի ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Չարն ու Չարուհին մտերու պիտի այցելեն Անգլիոյ թագուհին:

—Տրէյֆիւսի ընտանեաց բարեկամներէն մին յայտարարած է թէ կը գրէ Տէյրի նիւզ, երբ Տրէյֆիւս ազատ արձակուի, պիտի ընակի Բարիդի շրջակաները դիւզ մը՝ ուր իւր ժամանակը պիտի անցունէ բարեախրական գործերով:

—Սուլթանը հեռագրու կանչել տուած է Բոֆօ. Չիէմէնը գերմանացի նշանաւոր վիրաբուժին, Ղազի Օսման փաշայի ստամբուսին վրայ վիրաբուժական գործողութիւն մը կատարելու համար:

—Չանգիպարի Սուրբաբնիկ.— Տէյրի նիւզի Պէւլիսի թղթակիցը կ'իմացնէ որ Չանգիպարի նախկին Սուլթանուհին Սիւսի Բարա հիւան Պէւլիս կը գտնուի: Սիւսի Բարա մայրն է նախորդ Սուլթանին՝ որ Անգլիոյ կողմանէ գահընկէց եղաւ քանի մը տարի առաջ և հիմա կը բնակի գերմանական արեւելեան Ափրիկէի եզերքն ի Տարէս-Սալամա: Սուլթանուհին կ'երեւի թէ զարմանալի բաներ լսած է գերման կայսեր քաղաքական զօրութեան վրայ և գիմած է Պէւլիսն ն. Կ. Վեհափառութենէն խնդրելու, որ իւր որդին հաստատէ գահին վրայ: Սիւսի Բարա կը կարծէ թէ Անգլիոյ հետ կրնաքուած դաշինքը չեղեալնկատուելով կողին կրնայ աւելուիլ գերմանական թեւարկութեան տակ և իւր որդին ալ Սուլթան հռչակուի:

Կ'ըսուի թէ Սուլթանուհին շաբաթներէ ի վեր Պէւլիս կը բնակի աղքատիկ թաղի մը մէջ. քանի մը օր առաջ սակայն առաջնակարգ Օթէի մը մէջ սենեակ մը վարձեց և այդ վայրիկանէն սկսեալ տարածուեցաւ իւր համբաւն: Արդեւ ի հոն կենալ մինչև որ կարենայ տեսնել Կայսրը: Արտաքին գործոց նախարարն իւր ականջները գոցած է Սուլթանուհոյն առաջարկներուն գէմը. . . ուստի Սուլթանուհին նամակ մը գրած է ուղղակի Կայսր և կը յուսայ ընդունուիլ Կայսր կողմէն ի Ռէյնէրնուօր. Այդ նամակին մէջ Սուլթանուհին կը պարզէ իւր տեսութիւններն և կը յարէ թէ իւր որդին կը սիրուի Չանգիպարի բոլոր ժողովուրդէն:

Թ Ղ Ս Ա Կ Յ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

... Խմբակի.

Թի. Յ Արեւոյսի մէջ Արբեր վերնագրով խմբագրական տեսութիւն մը բրած էր, և ի մէջ այլոց Եգիպտոսի Հայոց կը վերագրէր Սփինքի բազմազարեան անտարբերութիւնը, նոյնպէս ձեր

անդրանիկ թուով երկու որբախնամ ընկ. կազմութիւնը աւետանիկ կ'ըսէր:

Անշուշտ կը ներուի մեզ զիտողութիւն մը ընել, և ձեր լուրջ նկատառութեան ննթարիկ հետեւեալը:

Ինչ երէկ բարեկամներէս միոյն հետ կը խօսէինք նոր կազմուած թէ Որբախնամի և թէ Հարան-Ընթերցատան վրայ. և ես կ'առաջարկէի բարեկամիս որ խոստանայ ներկայ գտնուելու յառաջիկայ կիրակի գումարելի Հարան-Ընթերցատան Ընթ. Ժողովոյ: Միանգամայն փափաք կը յայտնէի մասնակցիլ Որբախնամ Ընկերութեան:

Ուստի քիչ մը տեղեկութիւն խնդրեցի Որբախնամի կազմութեան և նպատակի վրայ. բարեկամն չիկնելով պատասխանեց թէ Որբախնամ Ընկերութիւնը Արապկիրոց է սրբ Արապկիրի որբանոցի մէջ պահելիք որբերուն թիւը աւելցնել և իւր պաշտպանները կարենալ պաշտպանելու համար պէտք եղած ապահովութիւնները գտնել ջանալ է:

Երբ չիկնելու պատճառը բացատրել խնդրեցի բաւ. որովհետեւ որբախնամի անուն Որբախնամ Ընկերութիւն Արապկիրոց է (ինքն ալ Արապկիրի մ'է) և որովհետեւ այդ օրինակ խարութիւն մը մանուսանց ներկայ պարագայիս խիստ անյատուարի ըլլալուն չիկնեմ է:

Այդ ինչո՞ւ ամբաստանեմք ամբողջ ժողովուրդ մը երբ մենք դասակարգելու խորութենէ գտն քաղաքի խորութիւն ալ կ'ընենք. որովհետեւ Արապկիրի Հայոց փոռ, Արապկիրի Հայոց Որբախնամ Ընկ.:

Ի՞նչ կը պահանջէք այլ ևս, քանի որ միայն և մի միայն Արապկիրի Հայոց կը պատկանի. բնական է որ մնացեալ հայերը թէ կը խորշին և թէ խեղճ կը նային այդպիսեաց վրայ:

Կարծեմ խիստ լաւ դաս մը առած կ'ըլլան ամեն այդ կարգի մարդիկ, կ'ընեն օրինակ առնեն նոյն իսկ Արապկիրու ժողովրդին իր նշանաւորութիւններով պատիւ բերող Կարապետեան Պետրոս էֆէնտին, որը տակաւին քիչ ժամանակ առաջ թէ Չիթուհի և թէ Վանայ սովետներն իւր հոգածութեան առարկայ ըրու. նա ևս Արապկիրի մ'է, բայց գիտցաւ իրեն և այս փութով օգնութեան, տառապեալ, սովեալ հայուն առանց խորութեան, լինի Արապկիրի, Մանազկերտցի, Չիթուհի Պատիւ այնպիսեաց, իսկ ամօթ խորոզներուն:

Հայաստանը ամենուս հայրենիքն է, իւր վերջերը գարմանիլ ամենուս պարտքն է, վերջույցէ խորութիւններն, այն ատեն պիտի տեսնէք որ, Սփինքի բազմազարեան անտարբերութիւնը իրացուցած չեն հայերն մեծաւ մասով:

10 Օգոստոս 1899
Գահիրէ
ՀՐ—Ա.Չ

Մ. Խ. — Նամակագիրը կը հրաւիրենք անգամ մը ևս ուշադրութեամբ կարգալ «Որբերը» գրուածը, այն ատեն պիտի տեսնէ թէ հոն խարութիւն և չ'տեսնուիր:

Իսկ Որբախնամ ընկ'րութեանց կազմակերպիչներուն կը թողունք բացատրել հակառութիւններն իր նամակի պարունակութեան:

Նամակագիրներէն կը խնդրուի քիչ մը աւելի ինքնակալ լեզուով պատրաստել իրենց գրածներն:

Թ Ո Ք Ա Ն Ս

Ե.

Գարման. — Տիրոգ կարծեաց այս հակասութիւն երէն ևս Քոստի վրիպումէն պէտք չէ յուսահատիլ. թոքահիւժախար թէեւ զիւրաբոյժ հիւանդութիւն մը չէ, սակայն բոլորովին անբուժելի ալ չէ. մոնաւանդ իրր դեռ արտա իւր սկզբը նաւորութեան մէջ է:

Բրօքէսոր Բարչուէլ. սնդղիցի այս նշանաւոր հեղինակը կ'ըսէ. «Թոքահիւժախար (թոքախտ) բուժելի հիւանդութիւն մը լինելու կա-

րեւոր իրողութիւնը ըստ իս գոնացուցիչ կերպով սպացուցուած է Լանկէն. թոքային հիւժախար բոլոր սպացոյցք ներկայ են եղած այն աստիճան, որ ցոյց տուած են թոքերու մէջ վիրակից խորհրու գոյութիւնն՝ և սակայն արտը բուժուած է կատարելագոյն Մենք գտած ենք սպիններ և կրային մակարդումներ մերթ մէկ կողման թոքափոյթի կիսուն կամ մէկ երրորդին վրայ և մերթ երկու կողման թոքերու վրիթակներու վրայ և տեսած ենք արտիս բուժումն մէկ կողման թոքերու մէջ՝ և շարունակութիւնը միւսին մէջ:

Տր. Լանկէ կ'ըսէ թէ, «Թոքահիւժախար բուժումը պէտք չէ նկատուի անկարելի, քանի որ թոքերը բոլորովին կազմալուծուած չեն դեռ. . . թոքերու ո՛ր և է մասին աւերոնմն անհրաժեշտապէս մահացու չէ»:

Տր. Ուլիւրմ, Լոնտոնի թոքահիւժախարի հիւանդանոցի բժշկապետը կ'ըսէ. «Աւերիչ ինչպէս որ է, թոքահիւժախար հիւանդու հաստատուած է թէ բուժելի հիւանդութիւն մ'է, և այս կրնայ տեղի ունենալ հիւանդութեան ո՛ր և է աստիճանին մէջ»:

Բրօք. Պէնէթ կը նկատէ թէ «Թոքախտ իւր նախնական վիճակին մէջ զիւրաբոյժ հիւանդութիւն մ'է»:

Տր. Վուտ' իւր «Բրադիս օմ Մէսիսըն» անուն գիրքին մէջ կը յիշէ Ֆիլապիթի Բոլիչ մը, որ իւր մանկութեան հասակին մէջ կը տառապէր թոքահիւժախար՝ հանդերձ արեւաթքութեամբ, և սակայն կատարելագոյն բուժուելով իւր հիւանդութենէն, մեռած է ծերութեան մէջ թիֆի հիւանդութենէ. և երբ մահուանէ վերջ զիւրանական գործողութիւնը կատարուած է վերան, թոքերուն մէջ տեսնուած են աղէկցած վերջերու նշաններ: Գաղղիացի բժիշկ մը կը յիշէ այս տեսակ հարիւրաւոր օրինակներ:

Բրօք. Ֆլինդ իւր կատարած գնումութիւններէն յանդած է սա եզրակացութեան թէ՝ «Թոքահիւժախար բուժումն աւելի նպատաւոր կերպով տեղի կ'ունենայ երբ արեւաթքութիւնը կը պատահի յաճախակի»: Մի և նոյն եզրակացութեան հասած են նաեւ Տր. Ուոլը և Տր. Ուէտս թէ զիւրանական գործողութեանց մէջ տեսնուած են թոքեր՝ որք կը կրեն թոքահիւժախար բուժումն լինելու նշաններ՝ այն անտարախալ է. թէ եղած են և կան անծեր նոյն իսկ բժիշկներ՝ որք մերթ այս տխրազգեցիկ ախտին ճիւղներէն ճնշուելու զփաղցութիւնն ունենալով հանդերձ, այժմ կը վայելին կատարելագոյն առողջ կեանք մը այս ևս անժխտելի է բայց ինչպէս կ'ըսէ Տր. Քօլբան՝ «որովհետեւ բժշկութեան մէջ բացարձակ օրէնք չ'կայ, չենք կրնար ըսել թէ ամեն ճիւրախաւոր կ'աղեկնայ» (Չուարձալի բժշկութիւնը երես 51), մանաւանդ քրք արտա անխնամ մնալով յառաջացեալ վիճակին կը համար:

Անգամ մը որ արտա յառաջանալով թոքերու օդային փամփուշտները կը պայթին և հոն խոցեր գոյանալով կ'սպանեն թոքային շարակցական հիւսուածներն ու այսպէս կը ջնջեն թոքային գոյացութիւնը՝ ալ ևս զփուար կը լինի բուժումն, թէեւ խոնմ միջոցներով թերեւս կարելի լինի արտակային կեանքն փօքը ինչ ևս: Մեծագոյն զիրը զոր պիտի խաղայ թոքահիւժախար բուժման մէջ՝ է առողջապահիկ օրինաց միջոցներու ճշգիւ կիրառութիւնը: Դեղերն երբ մատակարարուին խոնմութեամբ կրնան լինիլ օգտակար այն պարագային, երբ ողջապահիկ միջոցներու հետ կ'ընթանան ձեռն ի ձեռն:

Ախտին կանխագոյն նշաններէն մին՝ ինչպէս ակնարկեցինք հարեւանցի կերպով մը արտախիշի նկարագրութեան մէջ՝ է վարակեալին օր ըստ օրէ հիւժումն Հակառակ իւր կերած արնքան պատուական և համադամ կերակուրներու որակին և քանակին, ենթակայն իրոքան իւր ունեցած ծանրութեան կամ զօրութեան վրայ մաս մ'իւս աւելցնելու կ'սկսի օր ըստ օր հալիլ ու մաշիլ. ուստի պէտք է մատակարարել այնպիսի դեղեր՝ որք կարենան ծառայել հիւանդին թէ՛ իւր սրնունը և թէ՛ կազդուրիչ կազմային գրութեան: Այս մասին, յիշեմք ուրեմն մի քանիսն այն դեղերէն զորս յաճախ կը գործածուին:
ՏՐ. Ա. Ս. ՅԱԿՈՒԵԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԳԱՀԻՐԷ, Օր. Բ. Գ. Մ.—Ստացանք ձեր նամակը, որոյ հրատարակութիւնը խնդրած էիք: Յօժարակամ պիտի կատարէինք ձեր խնդիրը, եթէ ձեր նամակի պարունակութիւնը մեր թերթի մասին գովեստներ չ'պարունակէր: Զեր փափաքը գովելի է. չարունակեցէ՛ք օգտակար նութիւն վրայ գրել երբեմն եւ այսպէսով եզրկատարնակ հայ իրագրական սեփն օրինակ հանդիսանալ, իրենց ժամանակին մէկ մասը գրելու գրագման յատկացնելու համար:

ԳԱՀԻՐԷ, Ազ. Սիմ.—Շնորհակալեօք ստացանք: Պ. Մ. Գ.—

Ն. Պ.—Ձեր գրածը չ'պիտի կարենանք հրատարակել: Իրաւունքի 50 թուոյն մէջ տեսնուած թղթակցութեան հեղինակին հիւանդ լինելուն պատճառաւ: Առ այժմ անողջներու մասին գրեցէ՛ք:

ՍՅՅԱԿ, Տ. Մ.—Ձեր զրկածն ստացանք Տ. Ա. Ս. Յ. Ի. ձեռամբ եւ Ստացրը անոր յանձնեցինք. շնորհակալիք:

ՏԻՏԱՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱՇՈՅ

Իրազայի մը կինը մեռնելով ցարին բաղեցին:

Էրիկը երբ լալով յուզարկաւորութենէն ետ կը դառնար,

Մտաբանու մը.

—Ինչքա՛ն այսպէս կողկողալով կուլաս, հարցուց.

—Կինս կորսնցուցի:

—Հաւատա՛, եղբայր, ես չ'գտայ զինքն . . . :

—Պարո՛ն, սեռաւ բսել կ'ուզեմ. եւ որովհետեւ աս համես եւ այրասե եր, անմխիբար ցաւօօ կուլամ:

—Սաւս կ'ըսես, եղբայր, քե որ ստուգիւ համես եւ այրասե եր, զեզ չ'ք բողուր երբար:

Գինեան մը մէջ.

Երկու հոգի կոնծելով կը խօսակցեին, առանց միտ բերելու որ ժամանակն անցած էր եւ գինեպանը խանութին փեղկերը գոցելու եւ լոյսեր մարելու վրայ էր:

Մին՝ բարեկամալով խանութպանին փութկոտութեամբ վրայ գրպանէն ծանրագին ժամացոյց մը հրանց եւ ժամանակը հեզել կ'ուզէր:

Խօսակիցը՝ որ իւր ընկերոջ շիշուքները լաւ գիտէր, ժամացոյցը տեսնելով, զարմանօօ քանի զնամ ըլլալը հարցուց:

Ընկերը. — Ինքն անորո՞ւ է, որովհետեւ զայն գնելու ատենս տէր քնացած էր . . . :

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ

Օգտուն եւ յարմարաւոր տեղ մը լաւ կաւ, հաւորեալ արձարան մը կայ, որոյ տէրը մեկնման պատճառաւ կ'ուզէ ծախել:

Հաստատուն գործ մը ունենալ փափաքողներն, թող գիտնն Արեւալոյսի խմբագրատունը հարկ եղած մանրամասնութիւններուն տեղեկանալու համար: 1-3

ԱՍԻԱԿԱՆ ՀԱՏԻ ՓՈՒՌ

Շարա Մուհամեճ Ալի, Վիքորիա դեղարանի դեմ Մանասրը փողոց թիւ 25

Մ. Թորոսեան, Կ. Բարունակեան եւ Ընկ. կը յայտարարեն թէ, իրենց նոր բացած փութի մէջ կը պատրաստուի անխարդախ այլևիէ ասիական թոնրի հաց եւ Լաւաւ:

Մարտագութիւնը անպայման կերպով դիւրացընող Ասիական այս պատրաստութիւնը շատ մը փափկանաչակներու զո՞ւնակութեան արժանացած է:

Անվիճելի կերպով միակը եւ անմրցելի: ՃԱՇՍԿԵՑԷՔ ԵՒ ՏԵՍԷՔ 1-8

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

Ս Օ Ն Օ Կ Ր Ա Ս

Գ.Ս.ՇԻՐԷ. — Մուսի փողոց, — Գ.ՅԷԼԻՐԷ: Ս. Եւ Ս. Սեմալիի վանառասան գիմնաց

Վերջերս հաստատուած իւր վաճառատուն մէջ կը գտնուի պատի եւ քօնօղի ընտիր տեսակէ բանտիւներու մեծ միջերը:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար գանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղի:

Ցրանական եւ ամերիկեան ապրանք սաննարներ տեսակներէն զարդեղներ, շղթաներ, օղեր, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորագութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԿՈՐ

4-50

ՏՕՐՓԵՐ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՒՈՐՈՅԺ Ապսին, Շարէ Գուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաններ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխարհէ:

6-10

Ա Ջ Դ

Տիկին Սօֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գահիրէ հաստատած ըլլալով, պատիւունի ծանուցանել հայ հասարակութեան՝ որ պատրաստ է իւր խնամքները առ իրեն պէտք ունեցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խղճամիտ աշխատութիւնը զինքը քաղաքիս առաջնակարգ մանկաբարձերու կարգը կանցընեն: Դիմել Պէն-էլ-Սուրէն, Դուրուսֆիշ փողոց թիւ 53: 6-6

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պագար Մուրուր թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը նարա Միւլլիսէն փոխադրած է ի Պագար Մուրուր Գրանասկան նորաձեւութեանց յար եւ նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբը մինչեւ ցարդ գոհ ըրած է իրեն գիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնէր:

Իրեն եղած յանձնարարութիւնը ո՛չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէ՛ք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել եւ կոշտերէ (նասրը) ազատ մնալ: 2-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷՔ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րասարդ) սեւ, շագանակագոյն եւ ոսկեգոյն: Սեւ ներկ շիշով վայրկենապէս սեւցնողը Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխարհալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զըշող (2 ֆրանք):

Ճերմկցնող լուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրկատուի մէջ միակը:

Ակուայի փուշի եւ ջուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գիտու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք ըրլոր ազգաց գործածած նամակազրոյցները: 2-8

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի Գ.Ս.ՇԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐՔԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրաիրագրեր, Այցկատարներ, Ցանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշտեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Ընկերութեանց եւ վանատակաւններու սյազրակաւ ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտապահութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եզրկատուի ո եւ է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. ԴԱՐՔԻՆԵԱՆ

Le Gérant, Dr A. S. HAGOPIAN